

Ասիկա ներքին պատճառն է, որ Թուրքիոյ փոստախտի հին երեւոյթը չի կրնար յիշեցնել:

Արտաքին պատճառի պրպտումը շատ պիտի շեղեցնէր մեզ մեր սեղմ նիւթէն, բայց անոր թուրանական շարժումը շօշափող հանգամանքին համար յայտարարենք, որ ընկ. Ռուբէնը չափազանց ապերախտ առաքելութեան մը նուիրեր է ինքզինքը, — ամէն զնով թուրանականութիւնը «խառնակութեանց, արիւնահեղութեանց» շարժառիթ ներկայացնելով, «որոնցմէ բնաւ չպիտի օգտուի Թուրքիան կամ Թուրանիան»: Մինչդեռ մենք տեսանք, թէ թուրանականութեան առաջին հանգրուանը նուաճուած է Գեմալի կողմէ, Կարսը ու Արտահանը եւ Սուրմալուն թրքական իշխանութեան կը պատկանին: Նախիջևանը՝ Ասորպէյճանի կցուած ինքնավար շրջան իբրեւ, անմիջական ազդեցութեան տակն է քեմալական Թուրքիոյ: Եւ այս համեղ պատասաները ձեռք ձգելու համար, թուրքերը չքաշուեցան, անչուշտ, մարդկային եւ նիւթական զոհողութիւններէ:

Չկայ քաղաքական եւ դիւնուորական յաջողութիւն, առանց համապատասխան միջոցներու վատնումին: Թուրանականութեան առաջին հանգրուանի թշնամիները հայերն էին: Թուրքերը նկատողութեան չափին հայկական բաղձանքներն ու աժան խրատները եւ ուղղակի քայեցին դէպի իրենց նպատակը:

«Սառնակութիւն, արիւնահեղութիւններ» ճիշդ է չպակեցան, բայց բնաւ չօգտուողը ոչ թէ թուրքերը եղան, այլ հայերը, միմիայն հայերը: Ալ ո՞ւր կը մնան ընկ. Ռուբէնի վարդապետութեան իմաստութիւնն ու հմայքը, որպէսզի արժանի համարենք զանոնք մեր յետին կարեկցութեան ու հետաքրքրութեան:

Պարսկաստանն ու Ռուսաստանը, թուրանականութեան դէմ թուամբ Վրանգնեցնելու ճիգն ալ, արուեստական է ըստ մեզ:

Առաջին երկիրը չունի ոչ մէկ հնարաւորութիւն, եւ ոչ ալ այնքան ներգործական ու արկածախնդիր է, որպէսզի թուրք կառավարութեան ծրագիրներուն բախիլ փորձէ: Պարսկաստանը առանց ուղելու եւ հակառակ իր կամքին գործ պիտի ստեղծէ թուրանական-

ներուն հետ, իր Ասորպատականը ձեռքէ չհանելու եւ չկորսնցնելու մասնագութեամբ. բայց ամէն նշան կայ հետեւցնելու, որ հազիւ թէ կարենայ ինքզինքը պաշտպանել, փոխանակ երթալ խառնուելու ուրիշներու գործերուն: Ամանուլլահ թագաւորի Աֆղանիստանը, իր կնքած դաշինքով աղաղակող աղաբարութիւն մըն է Բիզա խաներուն կամ Փէհլէվիներուն հրամցուած: Աֆղանիստանը (Թուրքիոյ մէկ գօրարանակն է, ինչպէս է Լեհաստանը Փրանսայի համար: Թէհրանի իմաստուն մեծամեծները դժուա՛ր թէ անդիտակ ըլլան գիրենք շրջապատող պայմաններուն:

Իսկ ինչ որ կը վերաբերի Ռուսաստանին, նուազ նպաստուոր չէ դեռինք, թուրանական դադափարներուն եւ քաղաքականութեան համար: Բոլշեւիկները իրենք էին որ Մուսթաֆա Գեմալը Կարս եւ Նախիջևան բերին: Այսօր լայնօրէն կը դիւրացնեն թուրանականներու քարոզութիւններն ու դաւադրական գործունէութիւնը՝ Ասորպէյճանէն Դադիստան, Ուղայէկիստան, Թուրքմէնիստան եւ մինչեւ միւս թուրք-թաթարական համարակալութիւնները: Թաթար համայնավար գործիչ Կարայեւի յայտնութիւնները դեռ մոռցուած չեն, որոնք հրատարակուեցան «Պրաւդա»ի, Մոսկուայի պաշտօնաթերթին կողմէ, 30 Դեկտ. 1927-ին: Կարայեւ բառ առ բառ կը հաւաստէր. —

«Դադիստան: Դասագիրքերու մէջ տիրող լեղուն թուրքերէնն է, մինչդեռ երկրի այս մասը թուրքերէնին անհարազատ է եւ աւելի մօտ է ասորպէյճանեան լեզուին, թաթարերէնին:

«Դադիստանի կըթական գործավարութեան համար դասագրքեր կազմողները թուրք բանակի մնացորդ սպաները եւ կամ նոյն թուրք գերիներն են: Այդ մարդոց ջանքերուն շնորհիւ է որ ներկայիս երիտասարդութիւնը կը դաստիարակուի թուրքերէնով:

«Դադիստանի մէջ բոլոր հրատարակուած ամսագիրները, թերթերը, դասագրքերը քեւ մնացած գրականութիւնը թուրքերէն են:

«Ասորպէյճան: Մտաւորականութեան մեծ մասը համաթրքական (թուրանական) տրա-